Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 122-Ն որոշման N 1 հավելվածի 125-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) լողական սարք և հաշմանդամի սայլակ ձեռք բերելու համար պետական հավաստագրեր տրամադրելու և դրանց գնային արժեքը որոշելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հաշմանդամի սայլակի և լողական սարքի ձեռքբերման պետական հավաստագրերի ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) քաղաքացիների կողմից վերադարձված հաշմանդամի սայլակը ժամանակավոր տրամադրելու կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) պետական հավաստագրերի հաշվառման գրանցամատյանը վարելու կարգը և ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) 2017 թվականին հաշմանդամի սայլակի ձեռքբերման մեկ պետական հավաստագրի գնային արժեքը կազմում է 95 հազ. դրամ.

2) 2017 թվականին 30 տարեկան և ավելի բարձր տարիքի՝ հաշմանդամություն ունեցող, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց համար լողական սարքի ձեռքբերման մեկ պետական հավաստագրի գնային արժեքը 30 հազ. դրամ է.

3) 2017 թվականին լողության խնդիրներ ունեցող 12-18 տարեկան երեխաներին և 18-ից մինչև 29 տարեկան՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար լողական սարքի ձեռքբերման մեկ պետական հավաստագրի գնային արժեքը՝ 80 հազ. դրամ է:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու և

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1369-Ն և 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1035-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22. Լսողական սարքերը տրամադրվում են լսողության խնդիրներ ունեցող՝ 12-18 տարեկան երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց:».

2) որոշման N 1 հավելվածի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23. Լսողական սարքերը և հաշմանդամի սայլակները տրամադրվում են պետական հավաստագրերի հիման վրա: Պետական հավաստագրերի տրամադրման, դրանց գնային արժեքի որոշման կարգը և պետական հավաստագրի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

3) որոշման N 1 հավելվածի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24. Պետական հավաստագրի հիման վրա լսողական սարքեր և հաշմանդամի սայլակներ տրամադրվում են որակավորման ընթացակարգի արդյունքում ընտրված այն կազմակերպությունների կողմից, որոնք լիազորված մարմնի հետ կնքել են պետական հավաստագրի հիման վրա լսողական սարք կամ հաշմանդամի սայլակ տրամադրելու մասին համապատասխան պայմանագրեր:».

4) որոշման N 1 հավելվածի 36-րդ կետի 6-րդ և 7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) լսողական սարքերի տրամադրման համար՝ սույն կետի 5-րդ ենթակետով սահմանված բժշկական կազմակերպության (հաստատության) կողմից տրված մասնագիտական եզրակացությունը լսողության կորստի աստիճանի և լսողական սարքի անհրա-

ժեշտության վերաբերյալ, աուդիոգրամման (աուդիոմետրիայի տվյալները), ինչպես նաև սույն կարգի 23-րդ կետում նշված պետական հավաստագիրը.

7) հաշմանդամի սայլակը տրամադրելու համար՝ սույն կարգի 23-րդ կետում նշված պետական հավաստագիրը:».

5) որոշման N 2 հավելվածի՝

ա. 7-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

5)	Լսողական սարք	12-18 տարեկան երեխաներին և 18-ից մինչև 29 տարեկան՝ հաշմանդամություն ունեցող անձանց՝ 5 տարի
		30 տարեկան և ավելի բարձր տարիքի՝ հաշմանդամություն ունեցող, տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց՝ 3 տարի

»,

բ. 7-րդ կետի 6-րդ ենթակետը հանել.

գ. 7-րդ կետի 7-րդ ենթակետում «7)» թիվը փոխարինել «6)» թվով, իսկ նույն ենթակետը «սայլակ» բառից հետո լրացնել «(հավաստագիր)» բառով: Նույն կետում «8)» թիվը փոխարինել «7)» թվով, «9)» թիվը՝ «8)» թվով:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանարպետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար պետական հավաստագրերի տրամադրման, դրանց գնային արժեքի որոշման կարգը և պետական հավաստագրի ձևը հաստատելու մասին» N 20-Ն որոշումը:

5. Թույլատրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հաշմանդամների սայլակի և լսողական սարքի ձեռքբերման նպատակով 2016 թվականի դեկտեմբերի 5-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգն ամբողջությամբ հայտարարել չկայացած՝ գնման պահանջը դադարելու հիմքով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի, որը 12-18 տարեկան երեխաներին և 18-ից մինչև 29 տարեկան՝ հաշմանդամության ունեցող անձանց լսողական սարքերի տրամադրման դեպքերի համար ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: